

ԼԵՒՈՆ ԱՇՈՏԻ ԱՍՄԱՐԵԱՆ, «ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ, ԿԵԱՆՔԸ ԵՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ», ԵՐԵՎԱՆ, 1971, 229 էջ:

Տեղ քայլի մէջ է դրական մեր քննադատութիւնը: Մեր դրականագէտները կա՛մ կը կրկնեն հեղինակին արտայայտած մտածումներն ու զգացումները, կ'ամփոփեն վէպը, տափակ արձակի կը վերածեն քերթուածին հրայրքոտ թէ քնարական գնացքը, եւ կա՛մ կ'ապաւինին դրուատական ամենափրկիչ եղբերու: Ինչ որ կը յանգի բան մը չըսելու:

Բացատրողական, բառերու միջոցով թարգմանական այդ յառաջատուութիւնը հաւանաբար պիտի պատշաճէր նկարչական կամ երաժշտական քննադատութեան: Ի վերջոյ ամէն մարդու հասողութեան, զարդացման տարողութեան մաս կրնայ չկազմել նկարչական, թատերական, երաժշտական, պարային հասկացողութիւնը, թափանցումը: Բայց հարկ կա՞յ դրաւորապէս արտայայտուած մտածումն ու զգացումը կրկնելու տարբեր բառերով, բացատրել յաճախ աւելի գեղարուեստականօրէն արտայայտուած, ինքնուրոյն ձեւով ու խորքով տարադուած յոյզերն ու մտածումները:

Այսպէս, մեր գրադատութիւնը հետզհետէ կը տարուբերի փառարանութեան եւ կենսագրական գիծերու ծանօթացումին միջև: Ու եթէ, այս ընթացքին, ընթերցողին մատուցուի քչիկ մը դատում տուեալ երկի մասին, յուչ մը հեղինակէն եւ քանի մը հպանցիկ ծանօթութիւններ ստեղծագործական եւ ընկերային կացութեան վերաբերեալ, կը թուի թէ դո՛հացում տրուած կ'ըլլայ, ամենայն ինչ կը դառնայ կատարեալ:

Հետզհետէ նկատելի կը դառնայ թէ քննադատութիւնը կը վերածուի ծանօթութեանց թուարկումի, դրական դիտելիքներու ցուցադրութեան: Քննադատը կարծես կը զդուշանայ յանդուգն միջամտութիւններէ, իր պաշտօնին իրաւասութիւններէն՝ թիւրն ու թերին մատնանշելէ: Կը ջանայ քայլ առ քայլ հետեւիլ հեղինակին՝ բացատրել, թարգմանել զայն, փոխանակ առաջնորդելու, նորանոր մտածումներով լուսաւորելու, ամբողջացնելու մատուցած երկը:

Ո՛չ միայն մեր մէջ, այլեւ արեւմտեան Եւրոպայի մէջ ալ, քննադատը այլեւս դարձեր է աւելի զգուշաւոր, շրջահայեաց, կոճկուած: Բռնագրօսիկ ճիգ մը կայ անկողմնակալ, անպառ երեւելու: Ատկէ՝ պակասը դատումի հրայրքին, մտածման յեղափոխութեան: Գիտական առարկայականութեամբ տեսնելու, դատելու, բացատրելու այս ձգտումը, աննախապաշար երեւելու այն ճիգը, սակայն, ժխտումն իսկ են դրական քննադատի դերին ու կոչումին: Որովհետեւ, այս ձեւով, քննադատը կ'իրագործէ իր պարտականութեան ա-

ուաջին մասը միայն - կը քննէ, կը զննէ միայն - հրատարելով աւելի կարեւոր մասէն՝ դատելէ, դատապարտելէ, կամ՝ ճշդորոշելէ արժանիքները: Գիրք կամ զրական լման վաստակ մը դատելու կանչուած քննադատը, իր այդ գերբորոշումով, հրատարած կ'ըլլայ իր անփական կարծիքներուն եւ դատումին առանձնայատկութիւններէն, ինչ որ զրականութեան առաջնորդողին անհրատեշտ դրամագլուխն ու անձնաշնորհումը պէտք էր ըլլային: Հաւաքականութեան մը ամենէն անժամանցելի, հարազատ ու մնայուն հարստութեան՝ զրականութեան զեկամարման մէջ, քննադատը ո՛չ թէ արդարասիրութեամբ մտահոգուելու է, այլ՝ արդարութեամբ: Այս պարագային «Արդար ըլլալու համար, այսինքն գոյութեան իրաւունք ունենալու համար, քննադատը պէտք է ըլլայ կողմնակալ, կրքոտ, քաղաքական...», կ'ըսէ Պօտլէր, բանաստեղծութեան արքան: Նուազագոյնը՝ զոնէ կշռելու եւ չափելու է գնահատութեան ի՛ր չափանիշով:

Քննադատի դերին ու կոչումին մասին այս մտածումներն ունեցայ, երբ կարդացի Հայկական ՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիային Մանուկ Արեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի կողմէ հրատարակուած գիրքը. - Վախա՞ն Թէֆէտա՞ն, կեանքը եւ Ստեղծագործութիւնը, հեղինակ՝ Լեւոն Աշոտի Ամարեան:

«Ուսումնասիրութիւնը նուիրուած է հայ նշանաւոր բանաստեղծին եւ հասարակական գործիչին կեանքին ու գործունէութեան: Վահան Թէքէեանը կը ներկայացուի իբր բանաստեղծ, արձակագիր, հրապարակաօս, զրականագէտ, խմբագիր: Վահան Թէքէեանի կեանքն ու գործունէութիւնը կ'ուսումնասիրուին ժամանակի հասարակական-պատմական ֆոնի վրայ»: Այսպէս կը բացուի գիրքը, Գրական Ինստիտուտի կողմէ: Ապա՝ ներածութիւն մը հեղինակէն (էջ 5-40):

Հարկ է անմիջապէս նշել թէ այս ներածութիւնը լուրջ, հասարակչուած, տիրապետող ուսումնասիրութիւն մըն է արեւմտահայ հատուածին քաղաքական կացութեան եւ զրական ստեղծագործութեան վերաբերեալ: Գեղարուեստական մեր այն ժառանգութեան մասին, որ մեղի կտակուեցաւ 1880-1900-ի ժամանակամիջոցին: Հերթով կը ներկայացուին, մերթ հպանցիկ, մերթ հիացիկ, այն բոլոր լուսաւոր դէմքերը, որոնք իրենց էութենէն ու գոյութենէն զլալի նրբբանդներ կտակեցին գոյառնող եւ վերյառնող մեր զրականութեան զանձարանին: Գրական դէմքերուն հետ՝ նաեւ դէպքերը, յախուռն վէճերն ու մտորումները զրական ուղիներու եւ ուղղութիւններու մասին:

Գիր ու զրականութեան սիրահարներուն, մեր զրականութեան պատմութեամբ զբաղողներուն համար շահեկան, խիստ թե-

լադրելի դիտելիքներ, տեղեկութիւններ ամփոփուած են այս ներածականին մէջ: Մեր մշակոյթին եւ գրականութեան վիճելի հարցերէն ոմանց քննարկումը եւ ուսանելի լուծումը կարելի է գտնել կուռ տրամաբանութեամբ ընդգծուած:

Դժբախտաբար, նոյն խանդավառութեամբ կարելի չէ խօսիլ հետադայ էջերու մասին, ուր Ասմարեան կը ձգտի ներկայացնել մեր բանաստեղծութեան իշխանին՝ Վահան Թէքէեանին անձն ու գործը, երբ կը ջանայ բնութագրել, ապա տեղադրել զայն մասնաւորաբար իր շրջանին եւ ընդհանրապէս՝ հայ քերթողութեան մէջ, ճշդելով պատճառներն ու վաստակին արժէքը:

Նախ կը պահի Թէքէեանին լրիւ կեանքը. չեն քաշուած նոյնիսկ այդ կեանքին գլխաւոր գիծերը: Իսկ եթէ տրուած են կենսագրական կարգ մը ծանօթութիւններ, անոնք ալ՝ տաղարաններուն երեւումին առնչութեամբ է, կամ՝ այս ու այն երեւոյթը, արտասահմանեան սա կամ նա անցուղարձին անդադառնալու համար միայն: Մինչդեռ, իր գրական վաստակին չափ կարելոր էր նաեւ ներկայացնել «Սէր»ի հեղինակին կեանքն ու անցած ուղին, որոնք մօտէն, բայց շատ մօտէն աղերս ունին իր քերթողական թողօնին հետ: Ե՛ւ հարուստ ե՛ւ ուսանելի եղած է այդ կեանքը:

Ապա, հեղինակը ստանձնած է Թէքէեանին քերթուածները բացատրելու, մեկնաբանելու հոգածութիւնը, փոխանակ հոն ծրարուած բառ ու բանին, արտայայտչական ձեւերուն, գոյներուն եւ ձայներուն պակասիչ ներդաշնակութեան, պատկերներու ուժգնութեան, զուսպ թախիծին, լուռ հեկեկանքին, աղնուական չափաւորութեան խորքը իջնելու և ի տես գրական այդքան առաքինութեանց՝ վճիռ արձակելու:

Ի հարկէ կարելի է չքմեղել Ասմարեանը: Հայրենիքի միջին ընթերցողը դեռ ծանօթ չէ Թէքէեանին, որովհետեւ ան, այդ միջին ընթերցողը, կը սիրէ, միշտ ալ նախընտրած է խոշոր թաւալք ունեցող, ազմուկ-չառաչով ընթացող ստեղծագործութիւնները, հռետորականը, դաւաթ մը ջուրին մէջ փոթորիկ յարուցողը, կամ միւս եզրը՝ սիրոյ մրմունջը: Հեշտ չէ ընկալել իմացական, խոհական բանաստեղծութիւնը, մտերմանալ մտածումի ու ներհայեցողութեան առաջնորդող վարպետին հետ եւ հաճոյք որոճալ, քանի պէտք է մաքառիլ, արթուն մնալ՝ հասկնալու համար:

Աւելին՝ հայրենիքի մէջ, ասիկա առաջին դիրքն է որ կը նուիրուի Վահան Թէքէեանին: Հաւանաբար վկայականի մը պաշտպանութեան աւարտաճառն է: Այդ պարագային՝ զնահատելի աշխատանք մըն է արդարեւ, որովհետեւ չունի «Թեզ»ի մը չորութիւնը, ոչ ալ քմածին ենթադրութեանց սանձազերծ արկածախնդրու-

թիւնը: Այս բարիքը առաւել եւս պիտի շեշտուէր, եթէ դրական դիտաշխատող հեղինակը խուսափէր կարգ մը քլիշէ արտայայտութիւններէ, որոնք այլեւս որեւէ նպաստ չեն բերեր հայրենիքի թէ սփիւռքի մէջ երկնող մտաւորականին: Խօսինք օրինակով:

Ամարեան, անդրադառնալով «Հրաշալի Յարութիւն»ին մէջ տեղ գտած կարգ մը ներամփոփ քերթուածներուն, կը դրէ. «Անյուսութիւնը եւ «ենթակայական ապրումները» նոյն տրամադրութիւններով են պայմանաւորուած: Դրանք երկուսն էլ մանրրութեական մտաւորական խաւի կեանքի արտայայտութիւններն են, մի խաւ, որը յենարաններ չունի եւ նրա տրամադրութիւնները լի են հակասութիւններով: Այդ բարդ ապրումների հետեւանքն է նաեւ յուսահատութիւնը կամ համակերպումը» (էջ 96):

Այս թուականներուն հոգեկան տրամադրութիւնները բնորոշել դասակարգային յատկանիշով՝ ապաժամ է այլեւս, անտեղի: Բանւորն ու պրոլետարը, պուրժուան ու պիւրոկրատը նման ապրումներ չեն ունենար արդեօք: Տրամադրութիւնները ներքին կիզումի արդիւնք են դիտականօրէն, իսկ բանաստեղծի մը «տրամադրութիւնը», անդրադարձը՝ ժողովուրդին հոգեկան ապրումը կը ցոլացնէ յաճախ: Ու ասիկա դժուար է հաստատել Թէքէեանի յիշեալ բանաստեղծութեանց մէջ, որոնց յատակին պառկած է ժողովուրդի խողխողումին ոյրերգութիւնը:

Ապա՝ թիւր մեկնութիւնը Թէքէեանին կարգ մը տաղերուն, «կրօնական մոտիվներով երկերուն»: Թէքէեանի մօտ ազգայինը, ազգային մտահոգութիւնն ու նուիրականութիւնները ակնբախ են: Տիրական՝ երբեմն: Կրօնական զգացողութիւնը մաս կը կազմէ այդ առհաւուրթեան: Անոր մօտ կրկնուող «Տէր»ը պէտք է հասկնալ այս հանդանակով:

Վիճելի է նաեւ ազգեցութեանց հարցը: Որովհետեւ, ըստ Ամարեանին, Թէքէեան ազդուած է Դուրեանէն, Ալիշանէն, Պոտլէրէն, Վերլէնէն, Հայնէնէն, Սամէնէն, Վերհարնէն, Մալարմէէն, Ռիմարոյէն եւ այնքա՛ն ուրիշներէ:

Յետոյ, կ'երեւի թէ հեղինակը բաւականաչափ չի ճանչնար սփիւռքը կազմող քաղաքական հոսանքները, անոնց էական դորժունէութիւնը, ուղղութիւնը: Այլապէս պիտի զուշանար դրելու. «Թէքէեան Ռամկավար Կուսակցութեան պատկանելով հանդերձ, ճշմարիտ, միանգամայն օրիեկտիւ դնահատական է տալիս Խորհրդային Հայաստանի մեծ նուաճումներին»: Եթէ այս գնահատումը փոխադրենք մեր աշխարհաբարին, բանից դուրս կու գայ թէ Թէքէեան ծաղկող հայրենիքին նուաճումները գնահատեց ի հեճուկս իր կուսակցութեան, կամ, մեղմադոյն պարազային, իր կուսակցական ընկեր-

ները տարբեր դիրքորոշում ունէին, բայց միայն ինք եղաւ իրակա-
նութիւնը տեսնողն ու գնահատողը: Պատուական այս գիտաշխատո-
ղը՝ Լեւոն Աշոտի Ասմարեան պարտի գիտնալ թէ յիշեալ կուսակ-
ցութիւնը իր պատգամաւորական առաջին ժողովին իսկ յստակ ու
մեկին դիրքորոշում որդեգրեց Սով. Հայաստանի հանդէպ եւ 1921
թ.էն ի վեր բանիւ եւ գործով աշխատած է անոր վերելքին եւ բար-
դաւաճումին համար: Գրիչի արագ հարուածով մը կարելի չէ յի-
սուն տարուան բոլորանուէր զոհողութիւնները անտեսել:

Կարելի է շարունակել նկատողութիւններու այս շարքը: Այ-
սուհանդերձ, Ասմարեանի ուսումնասիրութիւնը յաջողութիւն մըն է
արեւելահայ հասկացողութեամբ, փաստագրային հարստութեամբ:
Պարտինք շնորհաւորել հեղինակին համբերատար աշխատանքը, մե-
ղուական պրպտումները, վաւերական աղբիւրներէ քաղուածները:
Մեր փափաքն է որ նման երկասիրութիւններ, նուիրուած արեւմտա-
հայ դէմքերու, շատնան տարուէ տարի:

Վահան Թէքէեանով եւ արեւմտահայ դրականութեան պատ-
մութեամբ շահագրգռուող ոեւէ անձ պարտի կարգալ գուրգուրան-
քով ու սիրով շաղուած եւ մեր բնաստեղծութեան իշխանին ձօն-
ուած հմտալից այս ուսումնասիրութիւնը: